

26 Եւ իսկ[յ]ոյն ի թարգմանութիւնս ձեռնարկեալ խորհրդաբար սկսանելով յԱռակաց իմաստնոյն Սողոմոնի, բովանդակելով զքսան եւ զերկուս յայտնիսն, զիին կտակարանսն յեղով ի հայ բան: 27 Եւ աշակերտք նորա Յովհանն եւ Յուսէփ ի նոյնս նպաստ լինէին: 28 Եւ զարուեստ գրչութեանն ուսուցանէր մանկագոյն աշակերտացն:

29 Ընդ այն ժամանակս թագաւորեաց Թեոդոս փոքր: 30 Եւ եկեալ երանելոյն Մեսրոպայ Յայոց վարդապետի, եւ բերեալ զնշանագիրս մերոյ լեզուիս առ սուրբն Սահակ Յայոց, առ թագաւորն Յայոց Վռամշապուհ, յոյժ ուրախ լինէին որպէս ընդ տախտակս աստուածագիծս. եւ գոհութիւն եւ փառս ամենեցունց արարչին մատուցանէին զնորոգատուր պարգեւացն որ տուաւ նոցա ի վերուստ: 31 Եւ ժողովեալ մանկունս ուշեղս եւ քաջուսմունս, փափկածայնս եւ յերկարոգիս, եւ դպրոցս կարգեալ յամենայն գաւառս եւ ի գեաւղս հրամանաւ սուրբ հայրապետին եւ թագաւորին, ուսոյց զբնաւ ամենայն աշխարհս Յայոց:

32 Երթեալ եւ յաշխարհն Վրաց երանելի այրն Աստուծոյ առնէ եւ՝ նոցա նշանագիրս ըստ տուեցելոյ ի նմա ի վերուստ շնորհացն Աստուծոյ եւ վարդապետս թողեալ անդ[ի] քաղաքաց քաղաքաց ուսուցանել զմանկունս նոցա: 33 Եւ ինքն յԱղուանս երթեալ: 34 Եւ անդ նորոգէր ըստ նմին աւրինակի զնշանագիրս եւ զուսումնասիրութեանն աւանդս: 35 Եւ վարդապետս թողեալ անդ դառնայր ի Յայս: 36 Եւ գտանէ զսուրբն Սահակ հայրապետ, եւ թարգմանութեան պարապեալ շնորհութիւն քրիստոսի յԱսորոյն, ոչ լինելով Յունի, զի ի Մերուժանայ այրեալ էին յոյն գրեանն հանուր աշխարհիս, զի ի բաժանել զաշխարհս Յայոց՝ չտային Պարսկաց վերայկացութիւն Յոյն ումեք ուսանել զդպրութեան իւրեան մասին, այլ միայն Ասորի: 37 Վասն որոյ յոյժ տարակուսեալ լինէին սուրբ հայրապետքն Սահակ եւ երանելին Մեսրոպ, եւ զնացին զկողմամբք արեւմտից վիճակին իւրեանց ի մասն Յունաց:

38 Եւ առաքէ սուրբ Սահակ զՄեսրոպ առ կայսր Թեոդոս եւ առ հայրապետն Ատտիկոս հանդերձ թղթովք, եւ թոռամբն իւրով Վարդանաւ, զգացուցանել նոցա զգալուստն իւրեանց, եւ զի ընդունեցին բնակիչք աշխարհիս զնոր ուսումըն վարդապետութեանս Յայոց: 39 Որոց հանդիպեալ զաւրապարին Անատոլիեայ, որ փոքր-ինչ արար ընդունելութիւն նոցա. զի յառաջագոյն լուեալ էր զլուր առաքիւնութեան երանելեացն Սահակայ եւ Մեսրոպայ. եւ ի ձեռն թղթոց յառաջագոյն զգացուցանէր կայսեր, եւ առնու հրաման արժանապէս առաքել եւ բարեփառութեամբ յուղարկել ի Բիւզանդիոն: 40 Եւ յանդիման եղեալ թագաւորին եւ հայրապետին, եւ ձեռնադրեցին զՄեսրոպ Եկեղեցիկոսիկոս. եւ գրեցին զնա ընդ առաջին երանելի վարդապետն: